

ուր էր պարտէզ, յոր եմուտ ինքն եւ աշակերտքն իւր» (Յովհ. ԺԸ. 1): Փրկչին յաճախակի հոս գալով աղօթելը եւ զիշերը իրեններուն հետ հոս անցընելը թոյլ կուտայ ենթադրել թէ այս տեղը ընտանեկան կալուած մըն էր: Այս կարծիքը կը հաստատուի այն իրողութեամբ որ Ս. Կոյսը հոն թաղուեցաւ: Պորտոյի անանունն ուխտաւորը հոն հանդիպեցաւ «այն քարին՝ որուն վրայ Յուգա Իսկարիովտացին Յիսուսը մատնեց» Ձիթենեաց լեռը տանող ճանապարհին ձախ կողմը, և որուն աջին՝ եկեղեցի մը շինուած էր արդէն Գ. դարուն:

3. Այրբ. — 530 ին, առաջին անգամ ուղեգիր Քէոզոսիոսն է որ կը յիշէ այն Այրբ որ կը գտնուի Գեթսեմանիի մէջ, Ս. Կուսի եկեղեցիին խիստ մօտ. Գեթսեմանիի տւանգութեան վրայ տարր մը կ'աւելնայ, որ է Բրիստոսի և Առաքելոց ընթրիքը այրի մը մէջ. ահա թէ ինչ կ'ըսէ ան. «Հոն է Յովսափատի Չորը, ուր Յուգա Յիսուսը մատնեց, հոն է Ս. Կոյսին Տաճարը, հոն է որ Տէրը լուաց իր աշակերտներուն ոտքերը և ընթրեց: Հոն կան չորս նստարաններ (accubita), ուր կը նստի Փրկիչը Առաքելոց մէջտեղը, և իւրաքանչիւր նստարանին վրայ երեք անձեր կրնային նստիլ: Այժմ անոնք որ բարեպաշտութեամբ կ'այցելեն, հոն ճաշել կը սիրեն, բացի միսէն. կանթեղներ կը վառեն այնտեղ՝ ուր մեր Տէրը Առաքելոց ոտքերը լուաց, վասնզի այս տեղը այրին մէջ կը գտնուի»: Այս խօսքերը կը հաստատէ նաև Plaisance ի անանունն ուղեգիրը 570 ին. «Ձիթենեաց լեռնէն իջնելով կուգանք Գեթսեմանիի Չորը, այնտեղ ուր Յիսուս մատուցուեցաւ, և ուր կան երեք նստարաններ, ուր նստան